

**ԳՐԱՐԱՐԱԼԵԶՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՔԱՐՏԱՐԱՆԻ
ԵՎ ՀԱՄԱՐԱՐԱՌԻ ՄԱՍԻՆ**

ԺՈՐԱ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Համարաբաժան բառը նախապես նշանակել է «համաձայն», «միաբան», իսկ հետո՝ «համաձայնություն», «համընկնում», «ներդաշնակություն»։ Համաբարբառներ սկսել են կազմել մեր թվարկության II դ. (Տատիանոս Ասորի)։ Սկզբնական շրջանում կազմում էին Աստվածաշնչի, սովորաբար շորս Ավետարանների համաբարբառը, ուր դրանց ընդհանրությունները գտնելու նպատակով աղյուսակի ձևով համադրվում էին Մատթեոսի, Ղուկասի, Մարկոսի և Հովհաննեսի Ավետարանները։

Շատ ժողովուրդներ, այդ թվում նաև հայերը, մինչև XVIII դ. օգտվում էին Աստվածաշնչի թարգմանական համաբարբառներից։

Համաբարբառ կաղմելու համար անհրաժեշտ է նախ քարտագրել տվյալ աշխատությունը, իսկ քարտագրումը տքնաչան աշխատանք է։ Հին ռուսերենի բառարանի քարտարանը, որն ընդգրկում է մեկուկես միլիոն քարտ, կազմվել է 50 տարում¹, իսկ ընտրովի 7 միլիոնանոց քարտարանը՝ 80 տարում։ Վրացիներն իրենց ընտրովի 2 միլիոնանոց քարտարանը կազմել են 10 տարում²։

Ռուսները նախ պրոֆ. Գ. Վինոկուրի և ապա ակադեմիկոս Վ. Վինոգրադովի ղեկավարությամբ մոտավորապես երեսուն տարվա ընթացքում քարտագրեցին, կազմեցին և հրատարակեցին (1956—1961) Պուշկինի ստեղծագործությունների լեզվի քառահատոր բառարան-համաբարբառը։

Անգլիացիները սկսած XVIII դ. մինչև մեր օրերը կազմել և հրատարակել են Շեքսպիրի (1564—1616) երկերի մասնակի կամ ամբողջական համաբարբառները։

Հայերը ևս վաղուց սկսել են կազմել քարտարաններ և համաբարբառ։ Բայց տարիների աշխատանքը մնացել է թերի, քարտարան կազմելու գործը ավարտի չի հասել։ Հայ առաջին տպագիր համաբարբառը (ընդգրկում էր միայն նոր կտակարանը) լույս է տեսել Զմյուռնիայում, 1848 թ.։

1867 թ. Երուսաղեմի միաբան Թադեոս վարդապետ Աստվածատուրյանին հաջողվում է յոթամյա լարված աշխատանքից հետո ավարտել Աստվածաշնչի համաբարբառը, որը հրատարակվում է 1895 թ.։

Մտավորականներն իրենց գիտական աշխատանքի ընթացքում, մասնավորապես բառարաններ կազմելիս, զգում են քարտարանների կարևորությունը։

Մկրտիչ Ավգերյանի գրաբարի «Առձեռն բառարանը» (Վենետիկ, 1846) Մխիթարյանների հաշվումներով պետք է ունենար 60 հազար բառ։ Բայց

¹ С. П. Мордовина, Г. А. Романова, Об источниках словаря русского языка XI—XVII вв. («Вопросы языкознания», 1974, № 3, стр. 52).

² Զ. Ս. Անսյան, Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, էջմիածին, 1972, էջ 92։

Հր. Աճառյանը պարզել է, որ այն ունի 56410 բառ: Իսկ հայագիտության երախտավորներ Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեյանի և Մ. Ավգերյանի «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836—1837) աշխատասիրությանը, ըստ Հր. Աճառյանի, պարունակում է 51400 բառ: Աճառյանի վկայությամբ, հին հայերենն ուներ ավելի շատ բառեր, քան լիակատար բառարաններն են մատնացուցում:

Քարտարաններն ու համաբարբառները կարող են ուսումնասիրության աղբյուր դառնալ ոչ միայն տվյալ ժողովուրդի, այլև բազմաթիվ ուրիշ ժողովուրդների մշակույթի, գիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրության համար: Բերենք ասվածը հաստատող մի օրինակ. այսօր հունարան հայերենը քիչ ուսումնասիրված բնագավառներից է: Ինչքան գաղտնիքներ կբացահայտվեն, եթե կազմվեն հունարան հայերենի (ինքնուրույն և թարգմանական գրականության) լիակատար քարտարանն ու համաբարբառը:

Հայտնի է, որ հայ ժողովուրդը, հանգամանքների բերումով, հին ժամանակներից շփվել է աշխարհի շատ ժողովուրդների՝ պարսիկների, հույների, արաբների, սելջուկների, թուրքերի և ուրիշների հետ: Հետևաբար, հայկական գրավոր աղբյուրները դեռևս շատ գաղտնիքներ կբացահայտեն նաև հիշյալ ժողովուրդների մշակույթի ու գիտության վերաբերյալ: Այդ առումով չուսաբանված շատ հարցերի պատասխանը կտան հայ մատենագրության քարտարանն ու համաբարբառը:

Հայերը իս երազել են ունենալ հայ մատենագրության մի ընդհանուր համաբարբառ, որը հետազոտական առատ նյութ մատակարարի հայագետներին: Ահա այս նպատակով էլ շուրջ երկու տասնամյակ առաջ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում ստեղծվեց հայկական քարտարանը: Ա. Ղարիբյանը կարողացավ լուծել քարտարան կազմելու դժվարին խնդիրը և հայտնագործեց քարտագրման նոր, արդյունավետ մեթոդ: Այդ մեթոդով կատարվող աշխատանքի բարձր արտադրողականության մասին գաղափար կազմելու համար դիմենք հետևյալ համեմատությանը. եթե մեկը օրական կազմում է 50—60 բառի քարտ (ընդունենք, որ յուրաքանչյուր բառի համար արտագրում է երկու տող), ապա Ա. Ղարիբյանի մեթոդով աշխատողը մեկ ժամում կարող է քարտագրել 100—120 բառ, օրվա ընթացքում՝ 800—900 բառաքարտ: ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում հինգ տարվա ընթացքում 10—12 աշխատակիցներ քարտագրեցին շուրջ 50 հեղինակների (Մուրացան, Շիրվանզադե, Նար-Դոս, Կուրդիյան, Աղայան, Լեո, Տերյան, Թումանյան, Իսահակյան, Վարուժան, Դուրյան, Մեծարենց, Զոհրապ, Կամսարական, Պեշիկթաշլյան, Պարոնյան, Սևակ, Թեքեյան, Սիամանթո, Զարյան, Խանդավյան, Սարյան, Սևունց, Զորյան, Բակունց, Չարենց, Դեմիրճյան, Շիրազ, Արագի, Քոչար, Թոթովենց և այլն) գեղաթվեստական երկերը, կազմեցին ավելի քան 10-միլիոն քարտ: Իսկ Հովհաննիս Հովհաննիսյանի, Վրթանես Փափազյանի և Մկրտիչ Խերանյանի գործերը վերածվեցին ընտրովի քարտարանի:

Ինչպես նշվեց, կան երկու տեսակ քարտարաններ՝ լիակատար (ամբողջական) և ընտրովի: Եթե լիակատարի ժամանակ քարտագրվում են հեղինակի օգտագործած բոլոր բառերը (օրինակ, Բաֆֆու երկերի ամբողջական քարտարանը ընդգրկում է 1 միլիոն 756 հազար բառ), ապա ընտրովի քարտարան կազմելիս քարտագրվում են ո՛չ բոլոր բառերը: Լեզվի ինստիտուտի վերո-

իշխյալ հեղինակային քարտարանները օգտագործվեցին ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը կազմելիս: Եթե ընտրովի քարտարանները աղբյուր են բառարանների համար, ապա լիակատար քարտարանները կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն բառարանների, այլև գիտական տարրեր հետազոտությունների համար:

ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում կատարվող քարտագրման աշխատանքները հիմք տվեցին ՍՍՀՄ ԳԱ գրականության և լեզվի բաժանմունքին՝ անդրադառնալու այդ խնդրին: Այդ բաժանմունքի կողմից ստեղծված բառարանային հանձնաժողովի բյուրոյի ընդլայնած նիստեր 1961 թ. հունիսի 28-ին լսեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի քարտարանի և բառարանի կազմման մասին» զեկուցումը և որոշեց. «Քանի որ Հայկական ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում հայոց լեզվի քարտարան կազմելու աշխատանքն իր մեթոդիկայով բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում, այն հանձնարարել նաև մյուս հանրապետությունների բառարանագրական կազմակերպություններին»:

1962 թ. Ա. Ղարիբյանի ղեկավարությամբ, ՀՍՍՀ ԳԱ հիմնականում գրադարանում, ծավալվում է 1960 թ. սկսված գրաբարակեզու հեղինակների երկերի քարտագրման աշխատանքը: Մինչև 1966 թ. քարտագրվում են գրաբարակեզու 50 հեղինակների երկեր:

Հեղինակային քարտարանները ընդգրկում են շուրջ 5,5 միլիոն քարտ:

Այդ քարտարանների հիման վրա կազմվել ու կազմվում են համաբարբառներ: Նախապես կազմվում և հրատարակվում էին, այսպես կոչված, բառաբերական համաբարբառներ (հորենացի, Եղիշե, Փարպեցի), որոնք բազմակողմանի հնարավորություններ կստեղծեն լեզվաբանական հետազոտությունների համար:

1969 թ. Ա. Աբրահամյանի խմբագրությամբ քարտարանում սկսվեց կազմվել Եղիշի Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատության համաբարբառը, որն իր բնույթով խիստ տարբերվում է վերահիշյալներից և կոչվում է բնագրային (տեքստուալ): Դրանում յուրաքանչյուր բառաձևի համար բերված են բնագրային ընդարձակ վկայություններ, իսկ ամեն մի նախադասության վերջում նշվում է տվյալ հրատարակության էջը: Հիշյալ համաբարբառը հրատարակվեց 1972 թ. գլխույ (ռոտատոր) մեքենայով: Այնուհետև լույս տեսան Կորյունի, Ազաթանգեղոսի (երվու հատորով), Այրիվանցու համաբարբառները և Եղիշեի, Փ. Բուզանդի, Ղ. Փարպեցու, Մ. Խորենացու, Գր. Նարեկացու երկերի բնագրային համաբարբառների 1-ին հատորները (յուրաքանչյուրը 35—40 հեղինակային մամուլ ծավալով): Մոտ ապագայում կհրատարակվեն Ղ. Փարպեցու, Փ. Բուզանդի, Մ. Խորենացու, Եղիշեի, Գր. Նարեկացու երկերի համաբարբառների 2-րդ հատորները և Հովհ. Դրասխանակերտցու պատմության բնագրային համաբարբառի 1-ին հատորը:

ՀՍՍՀ ԳԱ քարտարանի կազմած բնագրային համաբարբառներում ընդգրկված են հեղինակների օգտագործած բոլոր բառերը, մինչդեռ Աստվածաշնչի համաբարբառում չկան դերանունները, չթեքվող խոսքի մասերը: Այնուհետև՝ այդ համաբարբառներում յուրաքանչյուր բառի գործածության համար բերվում են ոչ թե համառոտ տեղեկություններ, այլ բնագրային սպառնիչ վկայություններ: Իսկ այդ հանգամանքն ունի այն առավելությունը, որ նման համաբարբառները կարող են ծառայել նաև իբրև սկզբնաղբյուրներ:

Դրանք հարուստ նյութ կընձեռեն բանասիրական, տեքստաբանական, աղբյուրագիտական, գիտության պատմության և այլ բնագավառների ուսումնասիրության համար:

Սովետահայ և օտարերկրյա բաղմաթիվ հայագետներ (Հ. Անասյան, էգմոնդ Շուպ, Զոն Գրեպպին և այլք), որոնք տարբեր լեզուներով հոգևածներ են զրել հայկական համաբարբառների մասին, բարձր են գնահատել գրաբարի համաբարբառի քարտարանում կատարվող աշխատանքը:

«Հայկական համաբարբառ» կոլեկտիվը իր առջև նպատակ է դրել կազմել և ավարտել նախ հեղինակային համաբարբառները, ապա դրանց հիման վրա ստեղծել հայ մատենագրության ընդհանուր համաբարբառը, որը կդառնա անսպառ մի գանձարան հայագիտական բազմապիսի հետազոտությունների համար:

Քարտարանում աշխատանքներ են տարվում նաև աշխարհաբար գրականության ուղղությամբ:

Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ կազմվեց նրա բանաստեղծությունների և «Աբու-լալա Մահարի» պոեմի բնագրային համաբարբառը: Կազմվում է նաև արևմտահայ մեծ բանաստեղծ Դ. Վարուժանի երկերի բնագրային համաբարբառը:

Քարտարանի կոլեկտիվը կարճ ժամանակում կազմեց և հրատարակեց Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» աշխատության հայերեն թարգմանության բնագրային համաբարբառը:

О КАРТОТЕКЕ И КОНКОРДАНСЕ ДРЕВНЕАРМЯНСКИХ АВТОРОВ

ЖОРА ТОСУНЯН

Резюме

Составлению конкорданса предшествует процесс создания авторской картотеки, однако последнее требует много времени и средств. Поэтому отдельные народы смогли составить лишь один конкорданс, или же конкорданс только одного автора.

В 1957 г. академик Академии наук Арм. ССР А. С. Гарибян предложил новый, продуктивный способ составления картотек, разработал новую методику создания авторских картотек. По этому методу 10—12 работников за 5 лет составили более 10 миллионов карточек по новоармянской литературе.

В 1962 г. коллектив армянской картотеки приступил к составлению картотеки древнеармянского языка (грабара) и в течение 4—5 лет создал картотеку в количестве 5,5 миллионов карточек более 50 древнеармянских авторов. При помощи этих карточек составляются конкордансы двух типов: словарно-грамматические и текстуальные. Уже издано более двадцати таких конкордансов.

Картотека является богатым источником для составления не только конкордансов, но и словарей и различных научных исследований.